

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութիւն

●Գործարկել է <http://online.ssa.am/> կայքը, որուն միջոցով կրնաք տեղեկանալ՝ արդէօք կը հանդիսանա՞ք ՀՀ կառավարութեան կողմէն քորոնա ժահրի տնտեսական հետեւանքներու չեզոքացման ուղղուած ընկերային ծրագրերու շահառու, թե՛ ոչ:

☑կայքի համապատասխան դաշտին մէջ հայատառ մուտքագրելով ձեր տուեալները՝ կրնաք տեղեկանալ աջակցութեան ծրագրի տուեալ ցուցակին մէջ ներառուած ըլլալ կամ չըլլալու մասին: Ծրագրերու շահառու հանդիսանալու պարագային կը տեսնէք նաեւ անուանումը այն դրամատան, ուր փոխանցուած է ձեզի համար նախատեսուած գումարը: Անձը հաստատող փաստաթուղթով անհրաժեշտ է մօտենալ տուեալ դրամատան որեւէ մասնաճիւղ եւ ստանալ միանուագ աջակցութիւն:

Նշենք, որ գումարը դրամատան հասանելի կ'ըլլայ երեք ամիս, եթէ այդ ընթացքին գումարի նկատմամբ պահանջ չառաջադրէք, անիկա կը վերադարձուի ՀՀ պետական պիւտճէ:

Նշենք, որ «քորոնա ժահրի հետեւանքով աշխատանքէն հեռացուած ծնողներուն հրատապ դրամական աջակցութիւն» (4-րդ միջոցառում) ծրագրի շահառուներու ցանկը, ամբողջական չէ եւ պարբերաբար կը թարմացուի:

Ուստի, Ձեր տուեալները ցանկին մէջ չգտնելու պարագային, փորձեցէք զանոնք վերստուգել որոշ ժամանակ անց: